

ՄՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ

«Աջակցել կառավարությանը եւ քաղաքացիական հասարակությանը լուծել բնապահպանական խնդիրները, ամրապնդելով պետական մարմինների և ՔՀԿ-ների Օրհուսի կոնվենցիայի իրականացման կարողությունները»

N UB 4200665





ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՏ - ՆՈՆՄԲԵՐ

Ծրագիրն իրականացնում է «ԲԼԵՋԱՆ»
բնապահպանական, սոցիալական, բիզնեսի
աջակցության ՀԿ-ն ԵԱՀԿ Երևանի
գրասենյակի ֆինանսավորմամբ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան և ընդհանուր տեղեկություններ ----- 3-5 էջ

2. Ծրագրի իրագործումն ըստ դրված նպատակների ,

Ծրագրի առաջադրանքերը, Գործունեություն 1.1

- Գործողություն 1.1.1 -----3-6-րէջ

- Գործողություն 1.1.2 ----- 7-10աէջ

- Գործողություն 1.1.3 ----- էջ

- Գործողություն 1.1.4 ----- էջ

3. Ծրագրի ուղղակի և անուղղակի շահառուները, համագործակից կառույցներն ու փորձագետները ----- էջ

4. Ծրագրով ձեռք բերված փաստացի արդյունքեր, քաղած դասեր և եզրակացություններ --
----- - 33 էջ

5. Ծրագրի շրջանակներում ի հայտ եկած դժվարություններ և նոր լուծումներ -----
----- էջ

6. Ծրագրի գնահատում և շարունակականություն ----- էջ

7. Վիճակագրական մանրամասն տվյալներ Օրհուս Կենտրոնների կողմից իրականացված միջոցառումների և մատուցված ծառայությունների վերաբերյալ -----էջ

8. Հաշվետվությանը կից ներկայացվող նյութեր ----- էջ



Ստեփանավանի Օրհուս կենտրոնի Գործունեության տարեկան հաշվետվություն 2015թ.

1. Նախաբան և ընդհանուր տեղեկություններ

Սույն ծրագրի նպատակն է նպաստել շրջակա միջավայրի լավ կառավարման և համայնքային անվտանգության սկզբունքների ներդրմանը՝ Հայաստանի Օրհուս Կենտրոնների միջոցով շահագրգիռ կողմերի ներգրավմամբ, տեղական և ազգային մակարդակներում աջակցելով ՄԱԿ-ի

ԵՏՀ-ի Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության, որոշումների կայացմանը հանրության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին Օրհուսի Կոնվենցիայի իրականացմանը:

Վերոնշյալ նպատակին հասնելու համար չափազանց կարևոր է հանրության պատշաճ մասնակցությունը որոշումների կայացմանը, որը բնապահպանական լավ կառավարման,

տեղական մակարդակում ժողովրդավարության հաստատման և համայնքային անվտանգության

սկզբունքների ներդրման առանցքային հարցն է և պատահական չէ, որ դրան են ուղղված Օրհուսի կոնվենցիայի մյուս երկու սկզբունքները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Օրհուս կենտրոնների առաքելությունն է՝ աջակցել կառավարությանը եւ քաղաքացիական հասարակությանը համատեղ ուժերով լուծել բնապահպանական հիմնախնդիրները, ամրապնդելով պետական մարմինների և ՔՀԿ-ների Օրհուսի կոնվենցիայի իրականացման կարողությունները, այս ծրագրի իրականացման ընթացքում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել այն գործողություններին, որոնք ուղղված են հանրության իրազեկության և որոշումների կայացման գործընթացին մասնակցության մակարդակի բարձրացմանը:

Կենտրոնը հարթակ են հանդիսանում պետական պաշտոնյաների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար՝ հանդիպելու, քննարկելու, տեղեկատվություն փոխանակելու, շրջակա միջավայրի և բնապահպանական անվտանգությանը վերաբերող հարցերի շուրջ երկխոսություն ծավալելու և

լուծման ուղիներ գտնելու համար:

Հաշվի առնելով, որ միայն հասարակության իրազեկումը այս կամ այն նախագծի վերաբերյալ, դեռևս բավարար չէ հանրության ակտիվ մասնակցություն ապահովելու համար, այս տարի մենք առավել ուշադրություն ենք դարձրել հանրության մոտիվացման ուղղությամբ տարվող աշխատանքներին՝ նախագծով նախատեսված փոփոխությունների արդյունքում սպասվելիք փոփոխությունների մեկնաբանությանը, համապատասխան հանրային կարծիքի

ձևավորմանն ու այլընտրանքային առաջարկությունների համատեղ մշակմանը:



Ստորև ներկայացվում է կենտրոնի կողմից իրականացված միջոցառումների բաշխումն ըստ տարատեսակների.

Միջոցառում	Քանակ
Ընդամենը իրականացված միջոցառումներ	33
<i>Այդ թվում.</i>	
Տեղեկատվության մատչելիությանն ուղղված	4
Հասարակական և կլոր սեղան-քննարկումներ	10
Հանրային լսումներ	3
Այցելություններ, աշխատանքային և խորհրդատվական հանդիպումներ	3
Դասընթացներ, սեմինար-քննարկումներ էկոկրթական միջոցառումներ	9
Շնորհանդեսներ	4

*Հայաստանի Օրհուս կենտրոններ*

Ըստ ծրագրի նպատակին հասնելու ժամանակացույցով նախատեսված գործողությունների, ինչպես նաև ընթացքում ծագած խնդիրներին լուծում տալու նպատակով, հաշվետու ժամանակահատվածում, Ստեփանավանի Օրհուս կենտրոնի նախաձեռնությամբ կամ այլ կազմակերպությունների հետ համագործակցությամբ իրականացրել են 32 միջոցառում, այդ թվում տեղեկատվության մատչելիության ուղղությամբ 6 միջոցառում, հասարակության մասնակցության ուղղությամբ 10, արդարադատության մատչելիության ուղղությամբ 1 ու էկոկրթությանն ուղղված 9 միջոցառում, , մասնակցել 3 հասարակական լսման, որոնց մասնակցել են ընդհանուր թվով 329 մարդ, որից 292 տղամարդ և 99 կին: Քննարկված հարցերի կամ նախագծերի մասին տարածել են ձեռքբերված տեղեկատվությունը: 4 անգամ կենտրոնը իր տարածքը տրամադրել է բնապահպանության ոլորտի քաղաքացիական հասարակության տարբեր նախաձեռնությունների և կազմակերպությունների:

Ստեփանավանի Օրհուս կենտրոնը իր գրադարանում ունի ավելի քան 300 անուն գրականություն և 30 անուն տեսաֆիլմերի խտասկավառակ:

Այս տարի Ստեփանավանի Օրհուս կենտրոնը ևս իր ուշադրության կենտրոնում է պահել Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեի Հայաստանի մասին որոշումների կյանքի կոչմանն աջակցությունը: Դրանց մասին Օրհուս կենտրոնը մշտապես բարձրաձայնել է թե պատկան մարմինների, թե հանրության հետ հանդիպումների ժամանակ: Ստեփանավանի Օրհուս կենտրոնը անրադարձել է Մարդու իրավունքների պաշտպանի 2014թ. «Գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին» տարեկան զեկույցում շրջակա միջավայրին առնչվող հարցերի վերաբերյալ տեղ գտած դիտողություններին, ՕԿ-ի համապատասխանության կոմիտեի առաջարկություններն օրենսդրության մեջ չամրագրելուն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» նոր օերնքով հանրային մասնակցության գործընթացն ավելի բարդացնելու հանգամանքին:



2. Օրագրի իրագործումն ըստ դրված նպատակների.

Օրագրի առաջադրանքները

Գործունեություն **1.1:**Ստեփանավանի Օրհուս կենտրոնը Հայաստանում շարունակում է բարձրացնել իրագեկությունը և արձագանքել բնապահպանական մարտահրավերներին և սպառնալիքներին՝ տրամադրելով հանրությանը լայնածավալ բնապահպանական տեղեկատվություն. Օրհուս կենտրոնները պետք է ապահովի քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը բնապահպանական կառավարման և որոշումների կայացման գործընթացներում:

Գործողություն **1.1.1** Ստեփանավանի Օրհուս կենտրոնը հավաքում է տարածում է բնապահպանական և առողջապահական ռիսկերի հետ կապված տեղեկատվություն՝ աղտոտված ջրի և քաղաքային միջավայրի օդի վերաբերյալ, հանքարդյունաբերության և այլ բնապահպանական խնդիրների վերաբերյալ. Բարձրացնում է հանրային մասնակցության արդյունավետությունը, զարգացնում հասարակության մասնակցությունը և թափանցիկությունը բնապահպանական հարցերում, գնահատում դրանք որպես դրական ներդրում ժողովրդավարական, արդյունավետ և լավ կառավարման համար:

Ենթագործողություն 1/1

Հավաքագրել տեղեկատվություն կապված բնապահպանական և առողջապահական ռիսկերի հետ, որոնք առաջացնում են քաղաքային միջավայրում աղտոտված ջրից և օդից, հանքարդյունաբերական օբյեկտների մոտ և այլ բնապահպանական թեժ կետերում

1/1.1 Կատարված քայլեր

Ստեփանավանի Օրհուս կենտրոնը Կենտրոնը տարվա ընթացքում հինգ հարցում է ուղղել պատկան մարմիններին, հավաքագրելով տեղեկատվություն շրջակա միջավայրի վրա ազդեցություն ունեցող կամ շրջակա միջավայրում պլանավորվող գործողությունների հնարավոր ազդեցության վերաբերյալ, պարզեցրել դրանք, վերլուծել փորձագետների օգնությամբ, տրամադրել ԶԼՄ-ներին ու տարածել կենտրոնների ինտերնետային կայքի, սոցցանցերի ու էլեկտրոնային փոստի հասցեների միջոցով:

Հարցումների մեծ մասն ուղղված են եղել Բնապահպանության, տարածքային կառավարման մարմիններին ու ՏԻՄ-երին, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպություններին:



1/1.2 Ձեռք բերված արդյունքներ

1

Այսօր բնապահպանական գերակա խնդիրներից է թափոնների կառավարումը: Կենցաղային և արտադրական աղբը թափվում է հիմնականում մոտակա գետերը: Դրանով իսկ ոչ միայն անդառնալի վնաս է հասցվում բնությանը, այլև՝ զբոսաշրջության զարգացման հնարավորությանը, խախտվում են ՀՀ կողմից ստորագրված կոնվենցիաները:

Բոլորովին վերջերս Ստեփանավանի Օրհուս կենտրոնը սկսեց կազմակերպել դասընթացներ «Նոր շունչ թափոններին» թեմայով, որի նպատակն է սովորեցնել երիտասարդներին թափոններից պատրաստել պիտանի պարագաներ.պլաստիկ շշերից՝ աթոռներ, սեղաններ, դրամարկղեր, խաղալիքներ, խցաններից՝ կախիչներ, պլաստիկ գդալներից՝ մոմակալներ, հին պնակիտներից՝ տոնաձառներ և այլն:Այսպիսով պակասեցնելով աղբի քանակը:

Դասընթացները հետաքրքրություն և մեծ հաջողություն ունեն: Ստեփանավանի ուսանողներից Օրհուս կենտրոնը ստեղծել է առաջնորդների խումբ, որի անդամները թափոններից վարպետորեն պատրաստում են տարբեր իրեր և սովորեցնում են նորանոր աշակերտների, ուսանողների, դասախոսների:






*Հայաստանի Օրհուս կենտրոններ
1/2.1 Կատարված քայլեր*

Հայաստանի Օրհուս կենտրոններ

Ստեփանավանի Օրհուս կենտրոնը ահագանգ ստացավ Գյուլագարակի և Պուշկինո համայնքներում կատարվող ծառահատումների մասին, որի համար Օրհուս կենտրոնի համակարգողը հարցում է ուղղել Ստեփանավանի անտառտնտեսության տնօրենին և հանդիպում կազմակերպեց Գյուլագարակի և Պուշկինոյի անտառապետերի հետ պարզելու իրավիճակը:



Հարցման պատասխանն էր, որ հատումները պլանային են, նույնը պնդեցին նաև աշխատակիցները հանդիպման ժամանակ:
Ակամա հարց է առաջանում , ինչու պլանային հատումներ կան, իսկ պլանային անտառվերականգնում չկա:

1/2.2 Ձեռք բերված արդյունքներ

Վերջին ժամանակաշրջանում լուրջ խնդիր է առաջացել Ստեփանավանի համայնքներ Գյուլագարակ, Գյառ-գյառ, Պուշկինո համայնքներում, որտեղ խիտ մշտադալար ծառերի անտառը վեր է ածվել բացատների, ընդ որում ըստ հետազոտության , շատ է վնասվում անտառը ամանորի նախօրեին` նոեմբեր, դեկտեմբեր ամիսներին , երբ բարբարոսաբար մեկ օրվա համար կտրում են 15-20 տարեկան մշտադալար ծառեր, իսկ մի քանի օրից դեն նետում, որը նմանվում է անշունչ դիակի:

Այս առումով Ստեփանավանի Օրհուս կենտրոնի ի-“Այլընտրանքային տոնաձայն” Ցուցահանդեսի միջոցով Լոռու մարզի բնակչության ուշադրությունը հրավիրել ոչ ավանդական տոնաձայնի, և տեղում բնակիչներին սովորեցնել պատրաստել այլընտրանքային տոնաձայն:



Ենթագործողություն 1/3

Հարթակ տրամադրել՝ ապահովելու համար հասարակության մասնակցությունը հանրային լուսամտերի, սեմինարների, բանակցությունների և միջնորդությունների

1/3.1 Կատարված քայլեր

Ստեփանավանի Օրհուս կենտրոնն աջակցել է Ստեփանավանի Մայակովսկի թաղամասի բնակիչներին համապատասխան ատյաններին բարձրաձայնելու շրջակա միջավայրի աղտոտված վիճակի մասին իրենց խնդիրը

1/3.2 Ձեռք բերված արդյունքներ

հարցի լուծմանն ընթացք է տրվել...





Ենթագործողություն 1/4

Ըստ անհրաժեշտության աջակցել ՇՄԱԳ գործընթացին տեղեկատվության տարածման միջոցով՝ ստեղծելով պայմաններ ապահովելու համար հասարակության մասնակցությունը.

1/4.1 Կատարված քայլեր

Ստեփանավանի Օրհուս կենտրոնի համակարգող մասնացեց «Քաղաքացիական հասարակության օր ՀՀ Ազգային ժողովում» միջոցառմանը:

Ստեփանավանի Օրհուս կենտրոնի համակարգող Մանյա Մելիքջանյանն առաջարկեց համապատասխան օրենքում փոփոխություն մտցնել՝ ՇՄԱԳ փորձաքննությունը հանրային լսումների վաղ փուլում իրականացնելու վերաբերյալ: Նա նաև հարց ուղղեց ԱԺ հանձնաժողովի ներկայացուցիչներին՝ կապված Ստեփանավան քաղաքին բնավճարներից մասնահանում չտրամադրելու վերաբերյալ, այն դեպքում, երբ Արմանիսի ոսկու բազմամետաղանոց հանքը 10 տարի շարունակ վնասում է Ստեփանավանին՝ աղտոտելով հողը, օդը, Ջորազետը: Բարձրացված հարցի շուրջ տեղի ունեցան բուռն քննարկումներ և ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Արմեն Ավետիսյանը, որպես Տաշիրի ներկայացուցիչ, առաջարկեց իր օգնությունը այդ կարևոր խնդրի լուծման առնչությամբ:



1/4.2 Ձեռք բերված արդյունքներ

3. Հայտարարություններն ու ՇՄԱԳ-ի նախագծերի ամբողջական փաթեթները

www.aarhus.am կայքի հայտարարությունների բաժնում տեղադրվելը ավելի է հեշտացրել հանրության մասնակցությունն այդ գործընթացներին, որովհետև երբեմն, նույն www.mnp.am

կայքում տեղադրվում է միայն հայտարարությունը, բայց նախագիծը տեղադրվում է լսումներից օրեր անց: Այս կերպ Օրհուս կենտրոնները օգնում են նախարարությանը ավելի ճշգրիտ և պարտաճանաչ աշխատել: http://aarhus.am/?page_id=33 :

Ենթագործողություն 1/5

Նպաստել Օրհուսի և մյուս բնապահպանական Կոնվենցիաների համատեղ գործողությունների իրականացմանը



e
1/5.1 Կատարված քայլեր

Ստեփանավանի Օրհուս կենտրոնի համակարգողի
հանդիպումը Արմանիսի ոսկու հանքի ղեկավարության հետ





1/6.2 Ձեռք բերված արդյունքներ

Ստեփանավանի կենտրոնը մշտական կապի մեջ է Արմանիսի ոսկու հանքի ղեկավարության հետ, վերջիններս մշտապես հրավիրում են կենտրոնի համակարգողին իրենց կողմից ձեռնարկվող միջոցառումներին, նախապես տեղեկացնում նախատեսվող հասարակական քննարկման կամ լսումների մասին:

Գործողություն **1.1.2** Օրհուս կենտրոնները կազմակերպելու են դասընթացներ եւ իրազեկության բարձրացման միջոցառումներ բնապահպանական որոշում կայացնողների, ՀԿ-ների, մասնագետների և այլ շահագրգիռ կողմերի համար, բարձրացնելու են իրազեկությունը Ազգային և միջազգային օրենսդրության մասին, շարունակելու են նպաստել Օրհուսի եւ Էսպոյի կոնվենցիաների իրականացմանը:

Ենթագործողություն 2/1

Շրջակա միջավայրի առնչությամբ կարևոր որոշումների կայացման գործընթացի և ոլորտային հիմնախնդիրների վերաբերյալ կազմակերպել հանդիպումներ, քննարկումներ, մամլո ասուլիսներ, դասընթացներ, իրազեկության բարձրացման միջոցառումներ՝ ոլորտի պատասխանատուների, ՔՀԿ-ների, ՁԼՄ-ների, կրթական հաստատությունների և այլ շահագրգիռ կողմերի ներգրավմամբ.

2/1.1 Կատարված քայլեր

Ոլորտի մարզային և տեղական պատասխանատուների, ՀԿ-ների, ՁԼՄ-ների, այլ շահագրգիռ կողմերի իրազեկության բարձրացմանը ուղղված ծրագրով նախատեսված 15 սեմինարներից իրականացվել են 6-ը՝ ըստ Ճանապարհային քարտեզի 2.1 և 2.2 կետերի.



Հունիսի 2-ին Ստեփանավաի Օրհուս կենտրոնը հանդիպում կազմակերպեց Գյուղատնտեսական քոլեջի ուսանողների հետ: Օրհուս կենտրոնի համակարգողը ծանոթացրեց ներկաներին Օրհուսի կոնվենցիայի ստեղծման պատմությանը, Հայաստանում Օրհուսի կոնվենցիայի վավերացման գործընթացին, նշեց ոչ միայն կոնվենցիային միանալու, այլև դրա դրույթները իրականացնելու:

Համառոտ զրույցից հետո մասնակիցներն իրենք եկան այն եզրահանգման, որ յուրաքանչյուր քաղաքացի, հենվելով Օրհուսի կոնվենցիայի դրույթներին, պետք է ակտիվություն ցուցաբերի շրջակա միջավայրի պահպանության գործում, տեղեկացված լինի, մասնակցություն ցուցաբերի որոշումների կայացմանը:



Ստեփանավանի գյուղ քոլեջ, Ստեփանավանի ՕԿ

1.2 Ձեռք բերված արդյունքներ:

1. Բարձրացվել է ՔՀԿ-ների, ՋԼՄ ներկայացուցիչների, երիտասարդների իրազեկությունը Օրհուսի կոնվենցիայով նախատեսված իրենց իրավունքների վերաբերյալ, ամրապնդվել շրջակա միջավայրի վերաբերյալ կարևոր որոշումներ կայացնելու գործում պատասխանատու անձանց



պարտականությունների մասին նրանց գիտելիքները:

2. Ոչ միայն դասընթացների տեղի ունենալու, այլև ստացած տեղեկատվության և գիտելիքների կարևորության մասին ՁԼՄ-ների լուսաբանման և օնլայն քննարկումների արդյունքում իրազեկվել են ավելի մեծ թվով մարդիկ.

Ենթագործողություն 2/2

ՏԻՄ-երի և մարզպետարանների աշխատակիցների համար կազմակերպել իրազեկման միջոցառումներ՝ ազգային օրենսդրության և Օրհուսի կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարման և դրանց համաձայնեցման վերաբերյալ,

2/2.1 Կատարված քայլեր

Մայիս ամսվա ընթացքում Ստեփանավանի Օրհուսի կենտրոնը Օրհուսի կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների վերաբերյալ 3 վերապատրաստման դասընթացներ է իրականացրել ՏԻՄ ներկայացուցիչների համար:

Միջոցառումները անց են կացվել ոչ միայն կենտրոնում, այլև գյուղական համայնքներում գյուղապետարաններում:

2/2.2 Ձեռք բերված արդյունքներ



Ենթագործողություն 2/3

Հիմնվելով կայուն արտադրության և սպառման մոդելների, ԱՄՏՌ տվյալների վրա՝ աջակցել կամ իրականացնել վերապատրաստում և հանրային իրազեկման բարձրացման գործունեություն քաղաքացիների և ձեռնարկությունների ներկայացուցիչների համար

2/3.1 Կատարված քայլեր

Ենթագործողություն 2/4

Համագործակցել շրջակա միջավայրի պահպանության և կայուն զարգացման հարցերով զբաղվող այլ նախաձեռնությունների կամ ծրագրեր հետ՝ տեղական և ազգային մակարդակներում

2/4.1 Կատարված քայլեր

1. Կենտրոնները հաշվետու ժամանակահատվածում սերտ համագործակցել են ԵՊՀ Կայուն զարգացման կենտրոնի, Տնտեսաիրավական վերլուծությունների կենտրոն ՀԿ, Հայաստանի անտառներ ՀԿ, «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ, «Հանուն մարդկային կայուն զարգացման» ասոցիացիայի, «Խազեր» Էկոլոգամշակութային ՀԿ, Հայկական բնապահպանական ճակատ նախաձեռնության և այլ ՔՀԿ-ների հետ,
2. Հատկանշական է համագործակցությունը Ադետների ռիսկերի նվազեցման ազգային պլատֆորմի հետ

2/4.2 Ձեռք բերված արդյունքներ


1. Վերոնշյալ կառույցների հետ համագործակցության արդյունքում պլանավորվել ու իրականացվել են մի շարք միջոցառումներ ուղղված հանքերի շահագործման հանրային



վերահսկողությանը, գործող ու նոր ՓՇԷԿ-երի շրջակա միջավայրի վրա հնարավոր հետևանքների կանխարգելմանն ու նվազեցմանը, Ռիո +20 գործընթացին, կայուն զարգացմանը և այլն



2. Ստորագրվել է համագործակցության հուշագիր ու առավել սերտ համագործակցության սկիզբ դրվել շրջակա միջավայրին սպառնացող վտանգների նվազեցման ու դրանց մասին իրազեկման ոլորտում Հայաստանի Օրհուս կենտրոնների և ԱՌՆԱՊ-ի միջև:



Ենթագործողություն 2/5

Նպաստել առավել ակտիվ քաղաքացիների ներգրավմանը շրջակա միջավայրի պահպանության գործընթացներին՝ աջակցելով նրանց մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին, կազմակերպել բնապահպանական խնդիրներ լուսաբանող միջոցառումներ, մասնավորապես Օրհուսի կոնվենցիայի խնդիրներին առնչվող:

2/5.1 Կատարված քայլեր

Կենտրոնը աշխատանք են տարել գիտակից քաղաքացիական խմբերի ձևավորման գործում, որոնք խորքային են ընկալում խնդիրը և կարող են սեփական ուժերով իրագործել իրենց իրազեկված լինելու և մասնակցելու իրավունքները

Մտեփանավանի Օրհուս կենտրոնի համակարգողն այցելություններ է կատարել Ֆիոլետովո համայնք և աջակցել ազգային փոքրամասնություն ներկայացնող ռուսազգի մալականներով բնակեցված Ֆիալետովո համայնքի բնակիչներին՝ ճիշտ, կազմակերպված գործողություններ իրականացնելու հանրային լսումների իրականացման փուլում:



2/5.2 Ձեռք բերված արդյունքներ

Ստեփանավանի Օրհուս կենտրոնի համակարգողի համայնք բազմաթիվ այցելությունների և ճիշտ գործողությունների արդյունքում մալականներով բնակեցված Ֆիոլետովո համայնքի ռուսազգի բնակիչները, հանրային լսումների իրականացման փուլում համայնքային մասնակցություն են ցուցաբերել՝ իրենց ձայնը լսելի դարձնելու համար վերջնական որոշման կայացման առումով:



Ենթագործողություն 2/6

Աջակցել և խթանել ՔՀԿ-ների միջև համագործակցությանը և գործընկերային հարաբերությունների ձևավորմանը՝ տեղական և ազգային մակարդակներում

2/6.1 Կատարված քայլեր



Օրհուս կենտրոնները օնլայն տեղեկագրերի և քննարկումների կազմակերպման միջոցով աշխատանք են տարել ՔՀԿ-ների համաձայնեցված համատեղ քայլերի պլանավորման ուղղությամբ, իրազեկել ՔՀԿ-ներին ոլորտում իրենց գործընկերների գործունեության վերաբերյալ:

Գործողություն 1.1.3 Օրհուս կենտրոնը մատչելի բնապահպանական տեղեկատվության հասանելիությունը տարբեր գործիքների միջոցով (www.aarhus.am վեբ կայք, տեղեկագրեր, տեղեկատվական վահանակներ, և այլն), ավելի ակտիվ հաղորդակցվելու են տեղական եւ ազգային ՋԼՄ-ների հետ:

Ենթագործողություն 3/1

Տեղեկատվության հավաքագրում վեբկայքի համապատասխան բաժինները թարմացնելու համար՝ «Օրհուս կենտրոններին առնչվող փաստաթղթեր», «Միջազգային Կոնվենցիաներին», «Փաստաթղթեր կապված Օրհուսի կոնվենցիայի հետ», «Օրհուս կենտրոնների գրադարան», «Հղումներ», «Կազմակերպություններ», «Հրապարակումներ» և այլն,

3/1.1 Կատարված քայլեր





ցուցադրվել է ավելի քան 15 ռեպրտաժ կամ առանց մեկնաբանությունների տեսաձայնագրություն:

Գործողություն **1.1.4** Օրհուս կենտրոնները կնպաստեն բնապահպանական կրթություն և պատասխանատու վարքագծի ձևավորմանը հասարակության շրջանում շրջակա միջավայրի վերաբերյալ, այդ թվում, Կոնվենցիայով երաշխավորված իրենց իրավունքներին:

Ենթագործողություն 4/1

Խթանել բնապահպանական կրթությունը և աջակցել Կոնվենցիայի կողմից երաշխավորված իրավունքների իրականացմանը

4/1.1 Կատարված քայլեր

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել երիտասարդների էկոկրթական մակարդակի բարձրացմանը, կազմակերպվել է 30 էկոկրթական միջոցառում՝ նվիրված վայրի բնության, էնդեմիկ ու հազվագյուտ տեսակների պահպանության կարևորությանը, գայլերի թվաքանակի կրճատման քաղաքականության անարդյունավետությանն ու հնարավոր անցանկալի հետևանքներին, հանրության իրազեկ լինելու և մասնակցելու իրավունքներին:



Ստեփանավանի Օրհուս Կենտրոնը աշխատանք է տարել մարզում առկա բնապահպանական արդյունավետ կառավարման լավագույն փորձի տարածման, կառավարման մարմինների և հասարակության փոխհամագործակցության լավագույն օրինակների ներկայացման ուղղությամբ, առաջարկել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև համագործակցության արդյունավետ միջոցներ և մեխանիզմներ՝ ակտիվ համագործակցելով Վանաձորի ,Ալավերդու, Ապարանի Գյումրու և այլ Օրհուս կենտրոնների, կրթական օջախների , հասարակական կազմակերպությունների հետ :



Կարևոր բուսաբանական տարածքների բացահայտում Ստեփանավանում

կազմակերպվեց էքսկուրսիա դեպի Լոռու սարահարթի որոշ ռելիկտային լճեր՝ Հայաստանի բնաշխարհի եզակի էկոհամակարգեր, որտեղ մասնակիցները հանդիպեցին Հայաստանի Կարմիր գրքում գրանցված սպիտակ ջրաշուշանին՝ ծաղկման փուլում կազմակերպվեց էքսկուրսիա դեպի

Լոռու սարահարթի որոշ ռելիկտային լճեր՝ Հայաստանի բնաշխարհի եզակի էկոհամակարգեր, որտեղ մասնակիցները հանդիպեցին Հայաստանի Կարմիր գրքում գրանցված սպիտակ ջրաշուշանին՝ ծաղկման փուլում:

4/1.2 Ձեռք բերված արդյունքներ

Մոտ 120 աշակերտներ, ուսանողներ, ուսուցիչներ, ՀԿ ներկայացուցիչներ, ստացել են բնապահպանական գիտելիքներ, իրազեկվել Կոնվենցիայի կողմից երաշխավորված իրենց իրավունքների մասին, ձեռքբերել պատասխանատվություն շրջակա միջավայրի և վայրի բնության

պահպանության առումով, դարձել են առավել նախաձեռնող:



Ենթագործողություն 4/2

Աջակցել հանրային խորհրդակցության կազմակերպման գործընթացում

4/2.1 Կատարված քայլեր

Կենտրոնները Ճանապարհային քարտեզի 5.2 կետի համաձայն աջակցել են հասարակայնության համար խորհրդատվության կազմակերպման գործընթացին կամ իրենք են տրամադրել համապատասխան խորհրդատվություն, այդ ուղղությամբ իրականացնելով 221գործողություն:

4/2.2 Ձեռք բերված արդյունքներ

Ենթագործողություն 4/3

Իրականացվող ծրագրի նպատակներին համահունչ մշակել գործունեության աշխատանքային ծրագիր, հաշվի առնելով տարածաշրջանի բնապահպանական առանձնահատկությունները և

արկա իրողությունները:



4/3.1 Կատարված քայլեր

Ստեփանավանի Օրհուս կենտրոնուր, տեխնիկական հանձնարարականի կենտերի հիման վրա մշակվել են տարեկան աշխատանքային պլաններ, հաշվի առնելով տարածաշրջանի առանձնահատկություններն ու տեղի բնապահպանական հրատապ խնդիրները:

4/3.2 Ձեռք բերված արդյունքներ:

Ստեփանավանի Օրհուս կենտրոնը մշակել է տեխնիկական հանձնարարականի կետերի վրա հիմնված տարեկան աշխատանքային պլանը , որտեղ հաշվի են առնվել նաև տարածքային առանձնահատկությունները և տեղի բնապահպանական հրատապ խնդիրները: Պլանը հաստատվել է Ստեփանավանի Օրհուս կենտրոնում խորհուրդի նիստի ժամանակ:



Ենթագործողություն 4/4

Իրականացնել ծրագրի ղեկավարի կողմից

հաստատված ամենամսյա գործունեության պլանով նախատեսված գործողությունները, մասնագիտական խորհրդատվության ապահովում՝

կենտրոնների աշխատանքների կազմակերպման, իրականացման մասով

4/4.1 Կատարված քայլեր



շահագրգիռ կազմակերպությունների ու քաղաքացիների էլեկտրոնային փոստի հասցեների, հեռախոսազանգերի միջոցով:

Ենթագործողություն 4/5

Համակարգողների համար հանդիպումների և վերապատրաստման դասընթացների կազմակերպում, ինչպես ԵԱՀԿ այլ ծրագրերի մասնագետների կողմից, նաև Կատարական կառույցներից/Աշխատանքային հանդիպումներ Երևանում/

4/5.1 Կատարված քայլեր

- 1. Ծրագրի արդյունավետ իրականացմանն աջակցել է ծրագրի ղեկավարի օգնականը և ծրագրի PR պատասխանատուն:
- 2. Առաջին հաշվետու ժամանակաշրջանում պլանավորված 2 աշխատանքային հանդիպումներն էլ իրականացվել են, որոնք տեղի են է ունեցել Երևանի Օրհուս կենտրոնում:

4/5.2 Ձեռք բերված արդյունքներ

- 1. Առաջին հանդիպման ժամանակ՝ 31.03.15թ., ներկայացվել է ծրագրի իրականացման ընթացքին վերաբերող աշխատանքային մի շարք հարցեր, ծրագրի նպատակները, արդյունքներին հասնելու բոլոր գործողությունները, նաև ծրագրի բյուջեն: http://aarhus.am/?page_id=9032/
- 2. Երկրորդ հանդիպմանը՝ 11.06.15թ., ներկայացվել է 3 ամսվա ընթացքում կատարած աշխատանքները և անցկացվել դասընթաց՝ «Պետական մարմինների իրավական ակտերի գործուղության և անգործության վիճարկման ընթացակարգային հիմնախնդիրները» թեմայով, փորձագետ, ի. գ. դ. Գևորգ Դանիելյան: http://aarhus.am/?page_id=10703/



31.03.2015, 1-ին հանդիպում



11.06.2015, 2-րդ հանդիպում

3. Մշտապես ծրագրի ղեկավարի, ղեկավարի օգնականի և PR պատասխանատուի կողմից

իրականացվել է մասնագիտական խորհրդատվություն կենտրոնների համակարգողներին, Տնտեսախրավական վերլուծությունների կենտրոնի փորձագետները մշտապես ուղղություն են տվել համակարգողներին խնդրահարույց հարցումների պատասխաններին ճշգրիտ արձագանքելու հարցերում, նաև աջակցել են Հրազդանի Օրհուս կենտրոնին Երկաթի հանքի առնչությամբ փաստաթղթերը վերլուծելու և հետագա գործողությունները պլանավորելու գործում http://aarhus.am/?page_id=9180&lang=en:

4. Օրհուս կենտրոնների համակարգողները մասնակցել են նաև այլ կազմակերպությունների կողմից անցկացվող վերապատրաստման դասընթացների, մասնավորապես ԱՌՆԱՊ հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում՝ «Բնապահպանական արտակարգ իրավիճակների կառավարում և FEAT –ի ինտեգրումը թեմայով» թեմայով, ՄԱԿ-ի Երևանի գրասենյակում:



3. Հրազդանի և Եղվարդի Օրհուս կենտրոնների համակարգողներն ու Կենտրոնների տեղեկատվության պատասխանատուն ԵԱՀԿ աջակցությամբ մասնակցել են Վիեննայում կայացած Օրհուս կենտրոնների 2015 թվականի տարեկան հանդիպմանը, որտեղ ներկայացրել են Հայաստանի Օրհուս կենտրոնների միջև համագործակցությունն ուղղված ոլորտի կառավարման բարելավմանն ու թե ինչպես են Հայաստանի Օրհուս կենտրոնները խթանում որոշումների կայացմանը հանրության մասնակցությունը:

http://aarhus.eng/?page_id=10442, պրեզենտացիաները կարելի է տեսնել հետևյալ հղումով http://aarhus.am/?page_id=131





4. Երևանի Օրհուս կենտրոնի համակարգողը ԵԱՀԿ աջակցությամբ մասնակցել է Թբիլիսիում կայացած «Շրջակա միջավայր և անվտանգություն» նախաձեռնության Հարավային Կովկասի տարածաշրջանային հանդիպմանը: Նշված հանդիպումների մասին մյուս կենտրոնների աշխատակիցներին հաշվետվություն է ներկայացվել աշխատանքային հանդիպման ժամանակ, ինչպես նաև կայքի միջոցով:

http://aarhus.am/?page_id=10648&lang=en http://aarhus.am/?page_id=10626:





4. Ծրագրով ձեռք բերված փաստացի արդյունքներ, քաղած դասեր և եզրակացություններ

Ծրագրով ձեռք բերված փաստացի արդյունքներ կարելի է համարել այն, որ.

1. Ստեփանավանի Օրհուս կենտրոնի ակտիվ գործունեության շնորհիվ հնարավոր է եղել ՇՄԱԳ նախագծի հասարակական լուսմների փուլում ազդել Ֆիլելետովո համայնքի տարածքում նախատեսվող ոսկու հանքի շահագործման նախագծի վերջնական որոշման կայացման վրա, գործընթացը կասեցվել է, Բնապահպանության նախարարը պահանջել է հաշվի առնելով տեղաբնակների, փորձագետների դիտողություններն ու առաջարկությունները, օրենքներին հակասությունները, մշակել և քննարկման ներկայացնել նոր նախագիծ:



5. Օրագրի շրջանակներում ի հայտ եկած դժվարություններ և նոր լուծումներ

Օրագրի իրականացման ընթացքում իհարկե եղել են որոշակի դժվարություններ, բայց դրանք էական ազդեցություն չեն ունեցել կենտրոնի գործունեության վրա:

6. Օրագրի գնահատում և շարունակականություն

7. Վիճակագրական մանրամասն տվյալներ Օրհուս Կենտրոնների կողմից իրականացված միջոցառումների և մատուցված ծառայությունների վերաբերյալ:

(Տեսեք կից ֆայլը)

Հաշվետվությունը կազմեց՝

Մանյա Մելիքջանյանը՝ Ստեփանավանի Օրհուս
կենտրոնի համակարգող

Հասցե. ՀՀ.Ստեփանավան,
Երիտասարդական 47 Հեռ.

Բջջ. (+374) 93315108

E-mail: manya_lore@yahoo.com

Մանյա Մելիքջանյան